

Երբ Մեծափառ Իշխանն Լեռն Հայոց Թագաւորը մեր Անգլիական Տէրութեան երկիրն հասնելու ըլլայ ,

Մենք՝ որպէս զի նոյն Թագաւորն ըստ իւր բազմանայ հանդիստ եւ ապահով գալուստ եւ վերադարձ վայելէ՝ կ'ընդունինք այս մեր ապահովութեան գրովն եւ մեր հովանաւորութեան ու պաշտպանութեան ներքեւ կ'առնունք եւ կը զնենք նոյն իսկ Թագաւորն իւր հպատակներովը , մարդիկներովը , սպասաւորներովն ու ծառաներով , — ո՛ր եւ իցէ աստիճանի ըլլան անոնք , — եւ քառասուն ձիերով ու ասոնց ամէն կերպ կազմածներով , մեր Անգլիական Տէրութեան հողին վրայ՝ մեր իշխանութեամբն ու զօրութեամբ , թէ՛ ցամաքի եւ թէ՛ ծովու վրայ , երբ ինքն հոս գայ ու կենայ եւ ասկից ազատօրէն իւր տեղը վերադառնայ .

Ասոր համար ալ ձեզի եւ ձեզմէ իւրաքանչիւրին կը հրամայենք ու կը պատուիրենք ,

Որ Հայոց յիշեալ Թագաւորին եւ կամ իւր հպատակացը , մարդիկներուն , սպասաւորներուն ու ծառաներուն , — ո՛ր եւ է աստիճանի ալ վերաբերին , — մեր նախասացեալ Տէրութեան մէջ , եւն . . .

Որոց ի հաւատս , եւնս կէս տարի պիտի զօրէ :

Վկայ է Արքայն , առ Ուեսսիլիւսրի , 'ի 24 Հոկտեմբերի :

'Ի ձեռն նորին իսկ Արքայի եւ Ժողովոյն :

Ապահովագիր տուեալ յսնուն Յովհաննէսի դր Ռուսոյ(1)

ԱՐՒԱՅՆ՝ համօրէն եւ իւրաքանչիւր ծովակալներուն , եւն . . . Ուղջոյն :

Ուզելով առանձին հոգ եւ ինամ տանիլ Յովհաննէսի դր Ռուսոյի՝ Մեծափառ Իշխանին Լեռն Հայոց Թագաւորի Տաճարապետին ապահովութեանը , (ինքն որ Անգլիոյ Տէրութեան երկիրը պիտի գայ մեր թոյլատուութեամբը՝ նոյն իսկ յիշեալ Թագաւորին գործոց տեսչութեանն համար) ,

Կ'ընդունինք այն Յովհաննէսն՝ ընկերակցութեամբ հինգ մարդկանց ու վեց ձիոց , չորս աղեղնաւորաց ու քսանչորս մօրուանի հպատակաց , եւ իրեն ուրիշ ո՛ր եւ իցէ զինուորական կազմածներովը՝ մեր Անգլիական Տէրութեան մէջ , մեր իշխանութեամբն ու զօրութեամբ , թէ՛ ցամաքի եւ թէ՛ ծովու վրայ , երբ հոս գայ ու մնայ եւ ասկից իւր

(1) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XVIII.